ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԾՁԲ-25/3-Ք

ք. Երևան «16» հունվարի 2025թ.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեն»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սիլ ինշուրանս» ԱՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Հ. Հախինյանի, որը գործում է ԱՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **5521000 (հինգ միլիոն հինգ հարյուր քսանմեկ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7,13 կետով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, և ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արամի 3,5
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
900011054013	Հ/Հ 163008157113
02647057	ՀՎՀՀ 02551341
Էդգար Գևորգյան	Հեռ: /060/ 540000
	Էլ. Փոստ: info@silinsurance.am
/ստորագրություն/	Հ. Հախինյան
Կ.Տ	/ Գործադիր տնօրենի ժ/պ /
	(ստորագրություն)
	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 16 » հունվարի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԾՁԲ-25/3-Ք ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	**66511170/502**	Կատարողը պարտավոր է իրականացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և կոմիտեին ենթակա մարմիններին ամրացված ընդհանուր թվով 147 տրանսպորտային միջոցների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)՝ ըստ կից ներկայացված հավելվածի: Ապահովագրության ժամկետը՝ պայմանագրի կնքման օրվանից սկսած 365 օրացուցային օր:	դրամ	5 521 000	147	ք. Երևան, Մ. Խորենացու 3,7 հասցեով	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվելիք համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից առավելագույնը 20 օրացուցային օրվա ընթացքում:

Այլ պայմաններ՝

- **Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով:**
- **Գնման գործընթացը կազմակերպվում է 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» 4-րդ ենթակետերի և 21-րդ կետի 1-ին ենթակետի դ/ պարբերության պահանջներին համապատասխան:**
- **Կատարողը պարտավոր է ներկայացնել յուրաքանչյուր ավտոմեքենայի համար հաշվարկված ԱՊՊԱ ծառայության արժեքը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արամի 3,5
Բանկ՝«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300815713
ՀՎՀՀ 02551341
Հեռ: /060/ 540000
Էլ. Փոստ: info@silinsurance.am
_____
_____ Հ. Հախինյան
/ Գործադիր տնօրենի ժ/պ /
(ստորագրություն)
Կ.Տ

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Հավելված 1.1
« 16 » հունվարի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԾՁԲ-25/3-Ք ծածկագրով պայմանագրի

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՑԱՆԿ
ՀՀ ՊԵԿ կարիքների համար փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման գնման

	Մակնիշ	Թողարկման տարի	Պետական համարանիշ	Ձ. Ու	Միավոր գներ
1	Տոյոտա-Քեմրի	2015	009LL55	181	33,000.00
2	Տոյոտա-Քեմրի	2015	002BB01	181	33,000.00
3	Տոյոտա-RAV4	2015	003BB01	181	33,000.00
4	Տոյոտա-Կորոլլա	2013	005BB01	124	35,000.00
5	Տոյոտա-Կորոլլա	2013	006BB01	101	35,000.00
6	Տոյոտա-Կորոլլա	2013	007BB01	124	35,000.00
7	Տոյոտա-Կորոլլա	2013	008BB01	101	35,000.00
8	Տոյոտա-Կորոլլա	2013	009BB01	101	35,000.00
9	Տոյոտա-Կորոլլա	2013	010BB01	101	35,000.00
10	Տոյոտա-Կորոլլա	2013	011BB01	101	35,000.00
11	Տոյոտա-Քեմրի	2007	013BB01	277	33,000.00
12	Տոյոտա-Կորոլլա	2010	014BB01	101	35,000.00
13	Տոյոտա-Քեմրի	2008	017BB01	181	33,000.00
14	Տոյոտա-Կորոլլա	2013	018BB01	101	35,000.00
15	Տոյոտա-Կորոլլա	2013	019BB01	101	35,000.00
16	Տոյոտա-Կորոլլա	2010	021BB01	101	35,000.00
17	Տոյոտա-Կորոլլա	2013	023BB01	101	35,000.00
18	Տոյոտա-Կորոլլա	2013	024BB01	101	35,000.00
19	Տոյոտա-Կորոլլա	2013	025BB01	101	35,000.00
20	Ռենո-Լոգան	2015	026BB01	75	33,000.00
21	Տոյոտա-Կորոլլա	2010	027BB01	101	35,000.00
22	Տոյոտա-Կորոլլա	2013	030BB01	101	35,000.00
23	Տոյոտա-Կորոլլա	2013	031BB01	101	35,000.00
24	Տոյոտա-Կորոլլա	2013	033BB01	101	35,000.00
25	Ռենո-Լոգան	2015	036BB01	75	33,000.00
26	Միցուբիշի Լ-200	2011	038BB01	142	40,000.00
27	Տոյոտա-Կորոլլա	2013	040BB01	101	35,000.00
28	Տոյոտա-Կորոլլա	2010	041BB01	101	35,000.00
29	Տոյոտա-Կորոլլա	2010	042BB01	101	35,000.00
30	Միցուբիշի Լ-200	2013	043BB01	136	40,000.00
31	Տոյոտա-Կորոլլա	2010	044BB01	101	35,000.00
32	Տոյոտա-Կորոլլա	2010	047BB01	101	35,000.00
33	Միցուբիշի Լ-200	2011	048BB01	142	40,000.00
34	Պեժո-Պարտնյոր	2013	049BB01	90	40,000.00
35	Տոյոտա-Կորոլլա	2013	050BB01	101	35,000.00
36	Տոյոտա-Կորոլլա	2010	051BB01	101	35,000.00
37	Տոյոտա-Կորոլլա	2010	052BB01	101	35,000.00
38	Տոյոտա-Կորոլլա	2010	054BB01	101	35,000.00
39	Տոյոտա-Կորոլլա	2013	055BB01	101	35,000.00
40	Տոյոտա-Կորոլլա	2013	056BB01	101	35,000.00
41	Տոյոտա-Կորոլլա	2013	057BB01	101	35,000.00
42	Տոյոտա-Կորոլլա	2010	058BB01	101	35,000.00

43	Տոյոտա-Կորոլլա	2013	059BB01	101	35,000.00
44	Տոյոտա-Կորոլլա	2013	060BB01	101	35,000.00
45	Տոյոտա-Կորոլլա	2010	062BB01	101	35,000.00
46	Տոյոտա-Կորոլլա	2013	063BB01	101	35,000.00
47	Տոյոտա-Կորոլլա	2010	064BB01	101	35,000.00
48	Տոյոտա-Կորոլլա	2013	065BB01	101	35,000.00
49	Տոյոտա-Կորոլլա	2013	066BB01	101	35,000.00
50	Տոյոտա-Կորոլլա	2013	068BB01	101	35,000.00
51	Տոյոտա-Կորոլլա	2013	069BB01	101	35,000.00
52	Տոյոտա-Կորոլլա	2013	070BB01	101	35,000.00
53	Տոյոտա-Կորոլլա	2010	071BB01	101	35,000.00
54	Տոյոտա-Կորոլլա	2010	072BB01	101	35,000.00
55	Տոյոտա-Կորոլլա	2013	073BB01	101	35,000.00
56	Տոյոտա-Կորոլլա	2013	074BB01	101	35,000.00
57	Տոյոտա-Կորոլլա	2013	075BB01	101	35,000.00
58	Տոյոտա-Կորոլլա	2013	076BB01	101	35,000.00
59	Տոյոտա-Կորոլլա	2013	077BB01	101	35,000.00
60	Տոյոտա-Կորոլլա	2013	078BB01	101	35,000.00
61	Տոյոտա-Կորոլլա	2013	079BB01	101	35,000.00
62	Տոյոտա-Կորոլլա	2013	080BB01	101	35,000.00
63	Տոյոտա-Կորոլլա	2010	082BB01	101	35,000.00
64	Տոյոտա-Կորոլլա	2010	083BB01	101	35,000.00
65	Տոյոտա-Կորոլլա	2010	085BB01	101	35,000.00
66	Տոյոտա-Կորոլլա	2011	088BB01	101	35,000.00
67	Տոյոտա-Կորոլլա	2010	089BB01	101	35,000.00
68	Տոյոտա-Կորոլլա	2010	090BB01	101	35,000.00
69	Տոյոտա-Կորոլլա	2010	091BB01	101	35,000.00
70	Տոյոտա-Կորոլլա	2011	092BB01	101	35,000.00
71	Տոյոտա-Կորոլլա	2011	093BB01	101	35,000.00
72	Տոյոտա-Կորոլլա	2010	094BB01	101	35,000.00
73	Տոյոտա-Կորոլլա	2011	095BB01	101	35,000.00
74	Տոյոտա-Կորոլլա	2010	096BB01	101	35,000.00
75	Տոյոտա-Կորոլլա	2011	097BB01	101	35,000.00
76	Տոյոտա-Կորոլլա	2010	099BB01	101	35,000.00
77	Տոյոտա-RAV4	2015	100BB01	181	33,000.00
78	Տոյոտա-Կորոլլա	2013	101BB01	101	35,000.00
79	Տոյոտա-Կորոլլա	2010	103BB01	101	35,000.00
80	Տոյոտա-Կորոլլա	2010	104BB01	101	35,000.00
81	Տոյոտա-Կորոլլա	2013	105BB01	101	35,000.00
82	Տոյոտա-Կորոլլա	2013	106BB01	101	35,000.00
83	Տոյոտա-Կորոլլա	2013	107BB01	101	35,000.00
84	Հյունդայի Հ-1	2010	109BB01	175	33,000.00
85	Տոյոտա-Կորոլլա	2013	110BB01	101	35,000.00
86	Տոյոտա-Կորոլլա	2013	111BB01	101	35,000.00
87	Տոյոտա-Կորոլլա	2010	112BB01	101	35,000.00
88	Տոյոտա-Կորոլլա	2011	113BB01	101	35,000.00
89	Տոյոտա-Կորոլլա	2010	114BB01	101	35,000.00
90	Ռենո-Լոգան	2015	116BB01	75	33,000.00
91	Տոյոտա-Կորոլլա	2013	118BB01	101	35,000.00
92	Տոյոտա-Կորոլլա	2010	120BB01	101	35,000.00
93	Տոյոտա-Կորոլլա	2010	124BB01	101	35,000.00
94	Ֆորդ-Կոնեկտ	2010	127BB01	75	40,000.00
95	Ֆորդ-Կոնեկտ	2010	128BB01	75	40,000.00
96	Ֆորդ-Տրանզիտ	2017	129BB01	125	40,000.00

97	Վազ-212140	2015	130BB01	83	34,000.00
98	Տոյոտա-Կորոլլա	2010	131BB01	101	35,000.00
99	Տոյոտա-Կորոլլա	2010	133BB01	101	35,000.00
100	Վոլվո	2012	134BB01	330	40,000.00
101	Վոլվո	2013	135BB01	330	40,000.00
102	Վոլվո	2013	136BB01	330	40,000.00
103	Վոլվո	2013	137BB01	330	40,000.00
104	Վոլվո	2013	138BB01	330	40,000.00
105	Տոյոտա-Կորոլլա	2010	140BB01	101	35,000.00
106	Միցուբիշի Լ-200	2013	142BB01	136	40,000.00
107	Տոյոտա-Կորոլլա	2011	145BB01	101	35,000.00
108	Միցուբիշի Լ-200	2015	146BB01	142	40,000.00
109	Ռենո-Լոգան	2015	148BB01	75	33,000.00
110	Ռենո-Լոգան	2015	151BB01	75	33,000.00
111	ԳԱԶ-27840Բ	2015	157BB01	107	40,000.00
112	Տոյոտա-Կորոլլա	2010	158BB01	101	35,000.00
113	Տոյոտա-Կորոլլա	2010	160BB01	101	35,000.00
114	Տոյոտա-Քեմրի	2010	164BB01	167	35,000.00
115	Միցուբիշի Լ-200	2011	165BB01	136	40,000.00
116	Տոյոտա RAV-4	2010	166BB01	170	35,000.00
117	Միցուբիշի Լ-200	2013	168BB01	136	40,000.00
118	Տոյոտա RAV-4	2010	170BB01	170	35,000.00
119	Միցուբիշի Լ-200	2013	171BB01	136	40,000.00
120	Միցուբիշի Լ-200	2011	172BB01	136	40,000.00
121	Միցուբիշի Լ-200	2015	180BB01	136	40,000.00
122	Գազ-22177	2015	188BB01	106	33,000.00
123	Գազ-22177	2015	189BB01	106	33,000.00
124	Ռենո-Լոգան	2015	196BB01	75	33,000.00
125	Ռենո-Լոգան	2015	198BB01	75	33,000.00
126	Տոյոտա-Կորոլլա	2011	200BB01	101	35,000.00
127	ԳԱԶ-A63R42	2015	201BB01	120	63,000.00
128	ԳԱԶ-A63R42	2015	202BB01	120	63,000.00
129	ԳԱԶ-A63R42	2015	203BB01	120	63,000.00
130	ԳԱԶ-A63R42	2015	204BB01	120	63,000.00
131	ԳԱԶ-A63R42	2015	205BB01	120	63,000.00
132	ԳԱԶ-A63R42	2015	206BB01	120	63,000.00
133	ԳԱԶ-A63R42	2015	207BB01	120	63,000.00
134	ԳԱԶ-A63R42	2015	208BB01	120	63,000.00
135	ԳԱԶ-A63R42	2015	209BB01	120	63,000.00
136	ԳԱԶ-A63R42	2015	210BB01	120	63,000.00
137	ԳԱԶ-A21R22	2015	211BB01	120	40,000.00
138	ԳԱԶ-A21R22	2015	212BB01	120	40,000.00
139	Գազ-27840Բ	2015	213BB01	107	40,000.00
140	Տոյոտա-Կորոլլա	2010	218BB01	101	35,000.00
141	Տոյոտա-Պրադո	2018	221BB01	275	33,000.00
142	Հյունդայի Էլանտրա	2012	155DE61	132	33,000.00
143	ՈՒԱԶ-Պատրիոտ	2015	490CM61	128	33,000.00
144	Մերսեդես-Բենս	2024	512DF61	326	40,000.00
145	Մերսեդես-Բենս	2024	511DF61	326	40,000.00
146	Մերսեդես-Բենս	2023	896DF61	170	40,000.00
147	Մերսեդես-Բենս	2023	897DF61	170	40,000.00
	Ընդամենը				**5,521,000.00**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արամի 3,5
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008157113
ՀՎՀՀ 02551341
Հեռ: /060/ 540000
Էլ. Փոստ: info@silinsurance.am

_____ Հ. Հախինյան
/ Գործադիր տնօրենի ժ/պ /
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« 16 » հունվարի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԾՁԲ-25/3-Ք ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« 16 » հունվարի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԾՁԲ-25/3-Ք ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն